Հաշվետվություն

«Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի «Տիեզերք» և «Robotics» ակումբներով սեպտեմբերի 26-ից 29-ը գտնվում էինք Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսում, որտեղ մասնակցում էինք նորարարական «Լեոնարդո Դա Վինչի մրցույթին»: Մրցույթին մասնակցում էինք 3 նախագծերով՝ «Ինքս ինձ ուսուցիչ», «Ռոբոտ Rb-1» և «Robogroup.am սոցիալական ցանց»:

Մեզ այնտեղ դիմավորելու էր եկել Կարինե Մանուկյանը, ով Վրաստանի կրթության և գիտության նախարարի խորհրդական է: Այնուհետ տեղավորվել էինք «Դիդուբե Պլազա» հյուրանոցում, որը բավական մոտ էր հենց Expo Georgia ցուցադրությունների սրահին, որտեղ էլ պետք է անցկացվեր մրցույթի expo-ն: Նույն հյուրանոցում էին տեղավորվել մրցույթի մասնակից Թուրքիայի և Ուկրաինայի պատվիրակությունները, որոնց հետ բավական ազատ շփվում էին մեր մասնակիցները: Սեպտեմբերի 26-ի երեկոյան գնացինք ցուցադրության սրահ և դասավորեցինք այն ամենը, որ պատրաստել էինք ցուցադրության համար:

Սեպտեմբերի 27-ի առավոտյան սկսվեց ցուցադրությունը. ներկայացված էին 289 նախագծերի միջից ընտրված եզրափակիչի մասնակիցները: Մեր բոլոր մասնակիցների ցուցադրություններն էլ շատերին էր հետաքրքրում, որի վառ ապացույցն էր նաև վրացական մի քանի լրատվամիջոցների և հեռուստաընկերության հարցազրույցը:

Ցուցադրությունը տևեց մոտ 3 ժամ, որից հետո արդեն սկսվեց մրցանակների հանձնման հանդիսավոր արարողությունը, որից առաջ մեր հայկական ներկայացուցչությանը խնդրել էին նստել առաջին շարքում: Նախ մեր «Տիեզերք» ակումբի աշակերտները արժանացան 2-րդ մրցանակին՝ պարգևատրվելով նոթբուքերով և դրամական պարգևով, ապա մեր մյուս մասնակիցներն էլ, որպես եզրափակիչի մասնակիցներ, նույնպես պարգևատրվեցին նոթբուքերով:

Մեզ հետ բացի մեր նախագծերից տարել էինք մեր կրթահամալիրի կրծքանշաններ (16 հատ) և բուկլետներ (34 հատ), որոնք նույնպես բաժանում էինք բոլոր հետաքրքրվողներին:

Երեկոյան ընթրեցինք «Շոթա Ռուսթավելի» ազգային գիտական հիմնադրամի տնօրեն՝Սուլխան Սիսաուրու հետ, ով մեզ մեծ սիրով հրավիրեց հաջորդ տարիներին ևս մասնակցել այդ մրցույթին և ավելի շատ նախագծերով: Այնտեղ նա նաև հուշանվերներ հանձնեց մասնակից արտասահմանյան թիմերի ղեկավարներին:

Ուկրաինայի ներկայացուցիչներից տեղեկացանք, որ 2013 թ. փետրվար ամսին Ուկրաինայում տեղի է ունենալու Intel-ի ուսումնական մրցույթ, որին մասնակցելու համար արդեն մտածում ենք նախագծեր: Նրանց հետ փոխանակեցինք նաև էլ. հասցեներ, որպեսզի հետագայում փոխհամագործակցենք և, իհարկե, մնանք կապի մեջ:

Սեպտեմբերի 28-ին նույնպես առավոտյան ցուցադրություն ունեցանք, որից հետո կազմակերպիչները պլանավորել էին էքսկուրսիա Թբիլիսիի տեսարժան վայրերով: Վերջում մենք որոշեցինք շարունակել արդեն սկսված էքսկուրսիան և հավելյալ 4 ժամ տրամադրեցինք Թիֆլիսում շրջելու համար:

Մեր այնտեղ եղած ամբողջ ժամանակահատվածում մեզ հետ միշտ կապի մեջ էր Կարինե Մանուկյանը, ումից մենք անչափ գոհ ենք: Նա նաև մեզ օգնեց կապվելու Վրաստանի թիվ. 24 դպրոցի հետ և կնքելու փոխհամագործակցության պայմանագիրը:

Վերջին օրն առանձնապես հագեցած չէր՝ պատրաստվում էինք դեպի Երևան ճանապարհ ընկնելուն: Կարևորն այն էր, որ կազմակերպիչները մեզ մեծ սիրով հրավիրել են կրկին մասնակցելու և խոստացել են արդեն հրավերը, բացի Հայաստանի կրթության և գիտության նախարարությանն ուղարկելուց, այս տարվա փայլուն մասնակցության համար անհատապես ուղարկեն նաև մեր կրթահամալիրին:

Ավելացնեմ, որ խմբի բոլոր անդամներս՝ և՛ ես ու Սերգեյ Բրուտյանը, և՛ չորս սովորողները, առաջին անգամ էինք Թբիլիսիիում:

Խմբի ղեկավար՝ Լևոն Արամյան